

# BACCALAURÉAT GÉNÉRAL

SESSION 2017

**ARMÉNIEN**

Lundi 19 juin 2017

LANGUE VIVANTE 1

Série L – Durée de l'épreuve : 3 heures – coefficient : 4

Séries ES-S – Durée de l'épreuve : 3 heures – coefficient : 3

**Le candidat traitera, dans la langue étrangère, l'ensemble des questions de l'épreuve pour laquelle il compose.**

*L'usage des calculatrices électroniques et du dictionnaire est interdit.*

Dès que ce sujet vous est remis, assurez-vous qu'il est complet.  
Ce sujet comporte 7 pages numérotées de 1/7 à 7/7.

## Répartition des points

Compréhension de l'écrit	10 points
Expression écrite	10 points

Մենք բարեյաջող գիւղ հասանք եւ երկու կճուճ<sup>2</sup> մածունը իրենց տեղը հասցուցինք, որոնք յաջորդ առաւօտուն լուսաբացին պէտք էր քաղաք հասցնէինք՝ ծախելու համար: Մեծ քոյրս իշուն վրայէն իջեցուց կաւ կճուճները, տեղափոխեց տուն, վար իջեցուց նաեւ իշուն վրայի թամբը<sup>3</sup>, զինք պարանով կապեց բակին անկիւնը գետնին խրուած 5 ցիցէն<sup>4</sup>, դէմը խոտ լեցուց ու գնաց դրացիին տունը, զինք զգուշացնելու, որ գիշերը ժամը երկուքին մեզ արթնցնէ:

Մենք՝ յոգնած երկար ճամբորդութենէն, շուտով քուն մտանք, գիշերուան ժամը երկուքին ելլելու ակնկալիքով<sup>5</sup>: Երբ աղմուկէն աչքերս բացի, տեսայ աւագ քրոջս այլայլած<sup>6</sup> դէմքը:

10 -Շու՛տ ելէ՛ք, ժամը վեցն է, քնացած մնացած ենք: Պէտք է արագ քաղաք հասնինք:  
-Վա՛յ, ինչո՞ւ դրացին մեզ չէ արթնցուցած,- քնաթաթախ հարցուցի:  
-Չեմ գիտեր, կ'երեւի մոռցեր է կամ ալ ձայնը չենք լսած, կ'երեւի խոր քունի մէջ էինք:  
[...]

Մենք արագութեամբ կճուճները դուրս հանեցինք, իշուն թամբը վրան դրինք, 15 ամրացուցինք, խուրջինը<sup>7</sup> վրան նետեցինք, մածունի երկու ամանները տեղաւորեցինք ամէն մէկը մէկ կողմ, պարանով պինդ-պինդ կապեցինք ու միջնեկ քրոջս հետ ճամբայ ինկանք դէպի քաղաք: Երեք ժամ յետոյ մենք արդէն կը գտնուէինք Նորքի<sup>8</sup> բարձունքին վրայ ու մեր դէմ բացուեցաւ այն ժամանակուան Երեւանի ընդարձակ պատկերը:

- Երբ որ քաղաք մտնենք, դուն կը պոռաս՝ մածու՛ն, մածու՛ն, լաւ մածու՛ն,- յանկարծ 20 ըսաւ քոյրիկս:

-Անկարելի՛ է,-յամառեցայ<sup>9</sup> ես,-դուն ինքդ կը պոռաս, ես միայն իշուն կը հետեւիմ, որ չնստի հանգստանալու: [...]

<sup>1</sup> մածուն – yaourt

<sup>2</sup> կճուճ – pot

<sup>3</sup> թամբ – selle

<sup>4</sup> ցից – pieu

<sup>5</sup> ակնկալիքով – dans l'attente de

<sup>6</sup> այլայլած – troublé

<sup>7</sup> խուրջին – sacoché de selle

<sup>8</sup> Նորք – Norq, quartier à Erevan

<sup>9</sup> յամառիլ – s'obstiner

Երբ փողոցը կը հնչէր քրոջս հուժկու «մածու՛ն, մածու՛նը», տուներէն դուրս կ'ելլէին տանտիրիկիները, փոքրիկ ամանները ձեռքերնին ու մօտենալով մեզի, նախ կը խնդրէին 25 քիչիկ մը մածուն լեցնել իրենց ափին<sup>10</sup> մէջ, իսկ ես յատուկ շերտփով<sup>11</sup> կը կատարէի անոնց ցանկութիւնը, կը լեցնէի գիւղի համեղ մածունը, ապա կը սպասէի, որ համտեսելէ յետոյ, այդ անձը ինչպէս կարձագանքէ՝ հաւնելով ու ժպտալով, կամ ալ դէմքը թթուեցնելով<sup>12</sup> պիտի առաջարկէ գինը իջեցնել:

Բայց, գրեթէ բոլոր համտեսողները միաձայն<sup>13</sup> կարծիքի էին, որ մածունը շատ համեղ է 30 եւ նման չէ ուրիշներու վաճառած մածունին, որմէ ետք ես իրենց առաջարկած ամանին մէջ կը լեցնէի անհրաժեշտ քանակի մածունը, իսկ քոյրս կը կատարէր դրամային գործողութիւնը:

Մի քանի ժամէն մեր մածունը արդէն ծախսած էինք եւ քոյրս զիս ձգեց իջեւանատունը<sup>14</sup>, որ ես իշուն հեծած տուն վերադառնամ, իսկ ինքը գնաց ինքնաշարժներու կայանը<sup>15</sup>, 35 ուրկէ ինքնաշարժով պէտք է գիւղ վերադառնար:

---

<sup>10</sup> ափ – poignée

<sup>11</sup> շերտփ – louche

<sup>12</sup> դէմքը թթուեցնել – ici : faire la grimace de mécontentement

<sup>13</sup> միաձայն - unanime

<sup>14</sup> իջեւանատուն – auberge

<sup>15</sup> Ինքնաշարժներու կայան – gare

## TRAVAIL À FAIRE PAR LE CANDIDAT

### I. COMPRÉHENSION DE L'ÉCRIT : (10 points)

1. Հեղինակը քանի՞ կնուն մածուն պետք էր վաճառեր:
2. Ո՞վ պետք էր արթնցներ հեղինակը:
3. Հեղինակը որո՞ւն հետ մածուն կը ծախսէ:
4. Անոնք մածունը ո՞ր քաղաքը կը ծախեն:
5. Հեղինակը ինչո՞ւ մնաց իջեւանատուն:
6. Ամբողջ մածունը ծախուեցաւ թէ ո՞չ:

### II. EXPRESSION ÉCRITE : (10 points)

Afin de respecter l'anonymat de votre copie, vous ne devez pas signer votre composition, citer votre nom, celui d'un camarade ou celui de votre établissement.

Traitez les deux questions. (120 mots minimum pour chaque question)

1. Հեղինակը կը նշէ թէ իրենց գիւղի մածունը նման չէ ուրիշներու մածուններուն: Բացտրեցէք, թէ ինչու գիւղի մածունը աւելի համեղ է ու աւելի լաւ կը ծախուի քան գործարանները արտադրուած մածունը<sup>16</sup>:
2. Հեղինակին եւ իր քրոջը կեանքին մասին ինչպիսի՞ պատկերացում կը կազմէք հատուածը կարդալու ժամանակ: Բացատրեցէ՛ք:

---

<sup>16</sup> գործարանները արտադրվում մածուն – yaourt industriel